ՍԻՒՆԻՔ

ԵԺԴԵՀԻ ՔՆԱՐ

1934

Տպ. ԱԼԻ., Ա., Սիմֆեոնի - Հարեկ

891.99
Ղ-63
1217
ՍՑՈՒՆԻԿ
Ընդհանուր գրական։

891.981

Սիմոնիա

891.99
Ս-63

ԵԺԴԵՀԻ ՔՆԱՐ

Ա II/794486

1934

Տպ. Ամի, Ս. Էջմիածնում – Հարկով

891.99
Ս-

Սոյն Գրքոյկն 100 օրինակ տպագրուած է ընտիր թուղթի վրայ, ծանօթ ազգայիններին ուղարկելու։ Վստահ եմք որ կարեցիութիւն պիտի տան, տպագրութեան համար արդեն պատրաստ, մեր ձեռագիր աշխատութիւնները չոյս ընծայելու։

ԱՇԱՏԱԿՆԵՐԸ

Որսորդուհու ամպերու մէջ, իր վեհապանծ սէգ կատարը
ծրարած,
Մասիս լեռան արծաթաշող թարմութիւններից նիրհէ նայիս, պիտի
տեսնես՝
Մոմէ ի ծով երկարած, սար ու ձորեր կտրած անցած,
Կարմիր ներկուած մեծ ճանապարհ փչացած։
Այդ աշխարհում իշխում էին ամենակուլ փիշտաղները ամենի,
Ապրում էին գազաններ արիւնռուշտ և սողուններ գետնաքարշ.
Եւ գեռ կանգուն էին կեցած, հին–հինաւուրց ժամանակից
մնացած,
Բազում կուռքեր պատմական և տաճարներ շարուած։

Արիւնարբու գանգուածների չարատանջուած կարաւաններ,
Զարհուրանքի մահատարած մղձաւանջը ճեղքելով,
Եկան, գոռոզկոտ այդ ճամբայով եկան և անցան,
Շանթահարող կայծակների փայտակող հարուածների դէմ
խոյացան և անցան,
Որոտացող սեւ ամպերի մրրկայոյզ ալիքները,
Եւ փոթորիկ աշխարհաւերաթռչունների նաւարկեցին և անցան։

Մահապարհաւ մտանգներին, իրրեւ մահան, կուրծք են տուած,
Կամքներ հպարտ, մարտիրոսներ հալածուած,
Հզօրների գոռոզամիներին, կարմիր արիւն դէմ են դրած,
Մթին, խաւար, հաղարամեայ չարչարանքի,
Վանդակից այդ ճանապարհ մերկ ու բոպիկ քալած և անցած.
Եւ ուռնացած բոզոքների լեռնակուտակ ալիքները,
Այդ ոգիով, անվախ–հպարտ ստրկած են և անցած։

Ճշմարտախոս մարգարէներ քննած էին իրավիճակ, օրէնքները պատմական,
Յայտնաբերած համատարած թշուառութեան պատճառները հիմնական,
Եւ գալիքի մասին խօսած, եզնելիքը զուշակած,
Երկար գարեր սուգ-ցիւանի, զուլումների ենթարկուած
Աշխատաւոր զանգուածներին նոր խօսք ասած,
Նոր գաղափար պատգամած։

Նոր մտքերի ոսկերերան քարոզիչներ և մարտիկներ անվեհեր,
Զրկուածների աշխարհի մէջ, որպէս փարոս գործեցին,
Խուճապահար ժողովուրդի ներքին աշխարհ ահաւոր կերպով յուզեցին,
Հուժկու լերանց բարձունքներին շեշտուած թափով ահեղօրէն զարկեցին,
Բոցավառող կայծերի խուրձ արձակելով՝ երկինք-երկիր լոյս փռեցին,
Ամէն կողմեր խարոյկները վառեցին,
Այդ կրակում իրենք ևս գիտակցաբար այրուեցան և անցան։

Կենաց-մահու որոնքնդոստ կռիւների ոլորտում,
Համատարած թշուառութեան, տառապանքի խոր ծոցում,
Մութ ու բոցի ամպերի մէջ մեծ ցաւերով երկնեցան,
Նենունդ առան ազատութեան նոր հաւատամք, նոր գաղափար, արքազան։
Սասանեցան հին կարգերը և բարկացան աստուածները տիրական
Երկինք-երկիր իրար անցան, զարհուրանքով համակուեցան իշխանները բռնակալ։
Աշխարհ արար ալեկոծուեց և խախտեցաւ հին օրէնքը հիմերից,
Բարձրագոռոզ ձայներ հնչուեց փոթորկի խորերից՝
Կռիւ անվերջ, կամք անսասան,
Այդ է ուղին փրկութեան . . .

Զանգուածները ի թուանգ եկան, վճռամտորեն կարդացին,
Մոգում առան արիանալ մեծ անցքերը պատմական,
Սկիզբ առան զանգուածային շարժումները յաղթական . . .
Զար բռնութեան ամրոցներին դրոն տուին քանդեցին։

Հերիզանի մշուշապատ խորքերում կրակները վառուեցան,
Անեղակոյ հրամանի ձայներ ընդառաջ յուսեցան։
Մոխիր դարձուցէ՛ք աշխարհ բռնութեան,
Ասէր թաղեցէ՛ք դահեր արքութեան,
Եւ խորտակեցէ՛ք կուռքեր չարութեան,
Ապրի ծածանեցէ՛ք կարմիր դրոշը սուրբ ազատութեան . . .
Ճանապարհ բացէ՛ք, գալիս են նրանք՝
Մարտնչողները տանջուած աշխարհի արդար իրաւանց։
Ճանապարհ բացէ՛ք, ծագիրանք դանեցէ՛ք, գալիս են նրանք՝
Հարուստ աշխարհի քաւութեան նոխազ,
Տանջուած-չարչարուած ժողովուրդների,
Հարստահարուած ծով զանգուածների—
Ռանդաւորներ՝
Հոգիներ անմահ եւ կամքեր հզաւոր։

Փարիզ, 1927

ՐԱՐԱՏ

Լեռնակուտակ իմ բազոքս լերանց արքայ Մասիս սարին խառնվի
Եվ փրկութեան հայեացքներս միայն նրան ուղղեցի։
Ցոյսս նա էր—Արարատը՝ լեռանց հպարտ թագուհին,
Հազարամեայ երազներիս նշանաբան դիցուհին.—
Որ իր մեջքին ունի կապած կանաչ գոտի
Եվ ուսերին ձգած ունի արծաթափայլ փիրանի,
Վարդ, մանիշակ, նռնագիրքով լայն փեշերը զարդարած,
Վեհաշքեղ գլուխ հպարտ ջինջ կապույտով պսակած։
Նա լսում էր լուռ բողոքս, ատատանքից ծագ առած,
Լուռ հայեացքիս խորքերումը պարփակուած,
Նա ապրում էր բիւր վշտերս, ծով ցաւերից գոյացած,
Բորբոքում էր կրակ կտրած նրա ներքին հուր աչքերն,
Կանաչ-կարմիր ծուխեր հանում մրրկայոյզ կատարից,
Որոտընդոստ ձայներ հնչում հրաբորբոք անդունդից։

Նա իր ծոցում բովանդակած ունի բոզոք գարերի,
Սերունդների ոգորումներ, յոյզեր վսեմ շատերի։
Նրա կրծքին, անեզակոչ հարուածների հնոցում,
Ազատութեան հուրն է վառում,
Կրակ ժայթքում իր բոցավառ կատարից,
Դղրդագին ձայներ հանում հրաբորբոք խորքերից։

Հպարտ անվախ նա թնդում էր վրիժագոռ կանչերով.—
Որ չի մարել և չի մարուիլ իմ ունեցած կարմիր հուրը ջնջմարար,
Որ չի մեռել և չի մեռնիլ ազատութեան գաղափարը վիրկարար.
Նա կանգուն է թշուառութեան և բռնութեան աշխարհում,
Նա ճախրում է չարչարանքի արիւնոտուած դաշտերում,
Նա ապրում է արեւազուրկ զանգուածների սրտերում.
Նա պիտի գայ քաջաց-քաջը պատմական,
Կարմիր հուրից գոյացած, ճերմակ լոյսով համակուած,
Արիւն ու հուր տեղալով մարտը տալու վճռական,
Ազգ ու ազինք գերիվարած հզօրների բռնութեան։

Մի պահ լռեց Արարատը և վերատին փոթորկոյդ ձայներ հնչեց,
Բազմաչունչ կանչերով շրջապատը զարհուրանքով համակեց—
Եթէ անգամ երբ ծովեր, երբ աշխարհ ես տեսնելու,
Եւ ամպերը իմ առջեւս խոնարհելու,
Վեհ, սիգապանծ բարձրութիւնից վար իջնեմ,
Եւ մի փոքրիկ, պարզ ու անշուք բլուրակի վերածուեմ,
Եւ կամ համակ ծուխ իսկ լինեմ,
Ամպերի պէս արար աշխարհ տարածուեմ,
Ինձ երբէք չըսասանիս,
Քանզի կանգուն-կենդանի եմ.
Միշտ էլ ունիմ հուր կենարար, ոգին անմեռ, շինարար,
Եւ ուժերը չանթահարող, բովանդակած իմ ծոցում։
Նա զոռում էր, նա կանչում էր՝
Ողջ էութեամբ բորբոքուած.
Եւ ոչ մի նահանջ, կռիւ անխափան,
Հաւատք անյողդողդ և կամք անսասան,
Այդ է ուղին ազատ-անկախ գոյութեան։
Ով տառապանքից պիտի որ երկնէ աշխարհ Հայաստան,
Պիտի որ հնչէ սուրբ ազատութեան ժամը սրբազան,
Բիւր տանջանքների արդար բողոքի հրացայտ լեռներից,
Եւ զանգուածների ծով տառապանքի երկունքի ցաւից
Պիտի որ ծնուի քաջը պատմական.
Սուր շողացնէ գլխին բռնուութեան,
Որ կերտած ունի պալատներ շքեղ,
Բազում զոհերի արիւնով ներկուած.
Որ զուլումների մռայլ աշխարհում զահեր է կանգնել՝
Հազար զոհերի գանկերից շինուած,
Գանկներ դարձնել անվերջ տանջանքի գեհենում կոփուած,
Եւ փառք ստեղծել՝ հալածուածների արեւից հիւսուած։
Պիտի որ հնչէ կենաց և մահու ժամը սրբազան,
Պիտի որ գոռան փողեր մարտական՝
Սերունդներու վրիժականչ բողոքներով հրդեհուած.
Հազարամեայ երազներով բոցավառ անմահ քաջեր փառապանծ
Ջրվէժներու կատաղութեամբ սուր կը պարզեն,
Կը ծածանի ազատութեան վսեմ դրօշ յաղթապանծ։

Թեհրան, 1926

ՁԱՐԽԸ ՏԷԼԷՔ

Կար մի ժամանակ,
Արքունական թաղը գլխիս կը շաղար.
Հուր ճառագայթող գլխիս պոակին,
Նախանձուած էին՝ աստղերը երկնի և աշխարհ համայն։
Սուրս էր հատու, մի ուժ անարկու.
Բևեռներ անատիկ և գօրքեր շատ-շատ.
Կամքս հրաման և խօսքս պատգամ,
Դողահար կ'անէր
Ազգեր ու ազգինք՝ ծովից մինչև ծով։
Պալատ շափիւղէ՝ շքեղ, հոյակապ,
Բարձր ճակատին փառքերուս նշան՝ որպէս ծիածան,
Դրօշ մեծուութեան հպարտ ի ծածան։
Ա՜յ գիտի աշխարհ։

Էն որ հպարտը կը համարձակէր գլուխ չը ծռել իմ ուժի առջև,
Էն որ գոռոզը պիտի յանդգներ
չը երկրպագել պատկերիս առջև,
Էն որ հարուստը, խանը, իշխանը կամ ցեղապետը,
Մօտս չէ եկած՝ հպատակութեան խօսքը առնելու,
Հաւատարմութեան ուխտը անելու.
Էն որ վեհապետ մեծաշուք կերպով
Ինձ այցելութիւն փառքով չէ տուած,
Հարուստ ընծաներ ինձի չէ բերած.
Եւ ակնածանքով ձեռքս համբուրած,
Յարգանքի գիրը մեծարանքով ինձի չէ գրած։
Ա՜խ ունայն աշխարհ։

Երբ բաշը հպարտ, վէսօրէն բռնած,
սուր ու սուսերով համակ ես զինուած,
Ճերմակ նժոյգը հեծնէի արի,
Եւ գեղածիծաղ պայծառ առաւօտ,
Ես մեծ թափօրով՝ հրաշագեղ փայլով
Շողեր բազմագոյն շուրջս փռելով,
Եւ մարտագոռոչ կանչերու միջով,

Ռազմաշէփորը բարձր հնչելով, կոսի կ'երթայի —
Սանձել ըմբոստը և փչրել իմ դէմ գահեր արքութեան,
Փթորկուում էին ազգեր ու ազգեր և երկիր արար.
Սասանուում էին երկնասլաց միթիսարի լեռներ,
Եւ ալեկոծուում բազում ծովերի ահագին ջուրեր.
Սարսափուում էին ասլանք քաջասիրտ, գայլերը անվախ,
Ամպերու վրայ վեհորէն ճախրող արծիւք յազթապանծ։
Ա՛յ գիտի աշխարհ։

Եւ ոսկեշափիւղ պալատիս շուրջը,
Բուրաստաններով ալ շրջանակուած,
Մայրի ծառերու գալար տերևաց քնքոյշ սասափիւն,
Եւ ոսկեբողբոջի վաղ առաւօտեան սոխակներու կանչ,
Զուլալ ջրերու անվերջ հոսանքի հոդեյոյզ կարկաչ,
Կարմիր ծաղկունքով կուրծքեր զարդարած.
Կոյսերը չքնաղ, ոսկեհուռ պճնուած,
Սիրալատ, շքեղ համապար բռնած,
Ցասքս կ'երգէին մի համերգ կազմած։
Ա՛խ անուրջ աշխարհ։

Մարալ գու փախիր, լուսին գու թագնուիր և սոխակ լռիր՝
Անա գալիս են կաթնաթոյր կուրծքով, սիրով ուռճացած,
Վարդի բուրմունքով ձիւնի պէս ճերմակ.
Սեւ սաթի նման մազերը արձակ,
Որպէս մնտաքսից հիւսուած վարագոյր,
Լուսաշող ճակտին քնքուշ խոնարհած,
Թագեր խոնարհող կանայք սիրաթոյր.
Ինչպէս վարդի թեր կարմիր շրթներով,
Վառ սէրը երգող, հեզանազ պարող,
Սիրամարգի պէս վեհորէն պճնուած,
Հուր ճառագայթող և կամքեր փչրող,
Կոյսեր աննման՝ ժպիտ դիցական։
Ա՛խ ազիզ աշխարհ։

Անցան գնացին օրերս փառաց՝ անդարձ յաւիտեան,
Երկնակամարից յաւէտ մարեցաւ աստղս աննման.
Եկան ու անցան կարաւանի պէս տարիներ բազում,
Ուժ, հարստութիւն, գանձեր անպատում.

Աշխարհազգոյդ անցքեր զանազան՝
Երազի նման անգութ յուխտեան։
Ահ երազ աշխարհ։

Անցած օրերու յուշերէն ազգուած,
Արքայից արքան մտքի մէջ սուզուած,
Դառնացած սրտով ասաց նա յուզուած —
Ունայն է փառքը, ոչինչ ամէն բան.
Եւ փուճ այս աշխարհ...

Բայց դեռ տակաւին հոգին չուանդած,
Արցունք աչքերին իր շուրջը նայեց,
Դողդոջուն ձեռքեր դէպի վեր պարզած
Մահամերձ հոգու յուզուած խորերէն թռաւ մի հառաչ.
Գուցէ և պատրանք, մի անուշ երազ,
Թէկուզ վաղանցուկ, մի անուրջ ունայն,
Թէեւ տանջարան, չարչարանք համայն,
Բայց հոգեպարար, ամէնքի մուրազ,
Ահ ազիզ աշխարհ...։

Թիֆլիս, 1926

ԱԶԼՈՒՄ ԽԱՆԱԶԱՏ

Զարկիր գուսան քո քնարի ոգբանուագ լարերին,
Եւ իմ վիշաք խառնիր նրա տրտմաթախիծ ձայներին.
Հրաշափառ արևգակի շուրջ թաւալող,
սոսկավիթխար գերեզմանց,
Մահապակ այս աշխարհի ոգբերգութեան
երգը կանչիր տխրագին։

Եւ գուք հովե՛ր, այդ ձայները
ձեր թեւերուն վրան առած ալացէ՛ք,
Իմ ընկերոջ գերեզմանին մօտը գացէ՛ք, ձէն արէ՛ք,
Ձեր զովարար հպումներով իմ համբոյրս գուք տուէ՛ք,
Իր մուրագին ծարաւ մեռած խանազատի
ոգին անմահ թունդ հանէ՛ք։

Հովե՛ր, խնդրեմ ամպրոպային բարձունքներից,
գուք վերհորէն, թեւաբախ,
Մի բոպէով իջնէ՛ք ի վար շքեղօրէն, արտաքախ,
Իմ ընկերոջ գերեզմանին շուտ անող ճշտագալար ծառերին,
Եւ խունկ ծխող գեղապսակ ծաղիկներու թփերին,
ձեր թեւերով հով անէ՛ք։
Եւ երգելով բոյն կառուցող գարնան բամբեր ծիծեռին,
Գերեզմանին շուրջը պարող ոսկեպաճոյճ թիթեռին,
Սիրոյ երգը գայլայլող վարդի կարօտ սոխակին,
Սեւեր հագած ազիզ եարին
Իմ խոր ցաւը յայտ անէ՛ք...։

Բարիզ, 1930

ԱԽՇԻՃԻՀԱՆ ՍՈՒՐԻՍՏԱՆ

Ես երգեցի ազատ կեանքի երազներդ սրբազան,
Հազարամեայ տառապանքիդ ծով վշտերը բաղմազան,
Ես երգեցի հին գարերու քո փառքերը յաղթական,
Մեծագործանչ անցքեր հարուստ քո սրբազան պատմութեան,
Ա՛յ իմ ազիզ յաւերժահարա՝
Նախշիճիհան Սուրիստան։

Որ յուզուեցին երկնասլաց քո լեռների վրիժագոռ
որդիները հպարտուած,
Եւ փշրեցին գերութեանդ ժանտ շղթաներ,
քեզ գարերով կապկապած.
Որոտակեցին սուլթանական գաժան լուծը քանդութեան,
Ցաւէտ թագուեց խարխուլ գահը չարութեան,
Ա՛յ իմ ազիզ յաւերժահարա՝
Նախշիճիհան Սուրիստան։

Թող զիս տանջէ ու գլխատէ
Արիւնարբու յաղթ հզօրը աշխարհի,
Թող զիս ծաղրէ եւ անարգէ
Մոլեգնած կոյր ամբոխը կատաղի.
Բնաւ երբէք ցաւ չեմ զգալ,
Ես չեմ յուզուիլ, վշտանալ,—
Զի ես ունիմ հոգուս խորքում՝ քոցավառ,
Վսեմ սիրոյդ սուրբ կրակը՝ լուսաշողշող մշտավառ։
Քեզնից հեռու, ուր էլ լինեմ,
Իրան, Թուրան, Հայաստան,
Քեզի համար միշտ տրոփող սրտիս խորքէն,
Անմահ փառքիդ վսեմ երգեր կը ձօնեմ,
Ա՛յ իմ ազիզ յաւերժահարա՝
Նախշիճիհան Սուրիստան։

Եթէ անգամ տանջուած հոգիս կատաղնատից
արձակելու մահավճիռ ունենամ,
Ոչ հառաչանք, ոչ էլ տրտունջ կը կ'ունենամ.
Աղատութեան կանչերով սիրոյդ երգը երգելով,
Ցաղթ հզօրին, չար գիտունին,
Բռնաւորին ծափահարող անմիտ, տգէտ խուժանին,
Կ'արհամարհեմ ու կ'անցնիմ.
Բնդի համար քաջին վայել հպարտ մահով,
Դէպի մահուան կարմիր գաշտը ես կ'երթամ,
Եթէ միայն ազատ կեանքիդ կարմիր արիւ,
Իրրեւ սիրոյդ գալինէ պսակ, իմ ճակատին ունենամ,
Ա՜յ իմ ազիզ յաւերժահարա՛
Նախշինեանի Սուրիատան։

Ես չեմ տրտմեմ, եթէ երբէք պարզ ու անշուք իսկ թաղուեմ,
Ու գերեզման առանց կաթիլ արտասուքի իսկ իջնեմ։
Ուր էլ լինի իմ գերեզման,
Իրան, Թուրքան, Հայաստան,
Պարզ հողակոյտ թէ ոսկեկուռ գամբարան,
Արժէք չունի ինծի համար՝ փուճ է ոսկին ու արծաթ,
Սէրն է միայն ուսուցածային գերարժէքը շոգակաթ,
Ա՜խ թէ միայն իմ շիրիմս այցելես,
Ծաղիկ ցանես, արտասուքով ոռոգես,
Ցուզուած հոգւով երգեր սիրոյ դու կանչես,
Ա՜յ իմ ազիզ յաւերժահարա՛
Նախշինեանի Սուրիատան։

Բարիզ, 1929

ՐԿՈՒՆՔ

Օուզուած ծովի լեռնակուտակ ալիքներ,
Իրենց ծոցում արեգակի վառ շողեր,
Զկներու հետ պար մի բռնած դիւթական,
Օձի նման գալարուելով,
Սոյանում են դէպի ափը խօլական.
Եւ ամէնի շառաչիւնով
Լերկ ժայռերուն ահեզօրէն զարնուելով,
Գոռում, կանչում — հին երգերը աշխարհի։

Գուսանը ձիգեր դիտում է յուզուած,
Սարհուրգը խորհին իր մէջ ծրարած,
Կապոյտ երկնքին՝ յոյսերը վառուած,
Ճգնում իմանալ, իմաստը կեանքի,
Եթէ կայ միայն,
Աշխարհ չէ ունայն։

Լազուր երկնքի անհուն ալքերէն,
Էութիւն ցնցող մի ձայն է լսում—
Զուր է գուսան քո հոգեմաշ որոնում,
Զուր է երկնային ամէն թափառում.
Կեանքի իմաստը այդտեղ է գտնուում։

Նայիր քո շուրջը,
Կանգուն մի հեռուն
Բարձր ի գլուխ ճեմող գեղունուն.
Նրա մէջ իսկ է իմաստը կեանքի,
Որ սէր է կոչում,
Որ իսկ է Աստուած։

Երկնաբարձ լերանց յաղթ կատարներէն արևն է ծագաց,
Արշալոյսի ոսկեհեղեղ շողերով հորիզոնը հրդեհած.
Պար էր բռնած առաւօտը թեւաբախ.
Եւ թռչնոց հանած սար ու ձորեր սրտաբախ.
Արշալոյսի պատկերովը կենսավառ,
Տրոփում էր կեանքը համակ հրավառ։

Պաղգամբում ճեմում էր կոյս մի չքնաղ հեզանազ,
Պայծառադէմ լուսնի նման սիրանազ.
Եթերանման խոր աչերը սեւորակ,
Սէր շողացող լուսացնցուղ թարթիչներով պճնորակ.
Կուրծքը բուրաստան, համակ սիրակաթ,
Ճակատ արփաշող, լուսին շողակաթ։

Ոսկեհեր վարսեր ուսերին փռուած,
Որպէս ծիրանի՝ մետաքսից հիւսուած,
Վսեմ սիրոյ երազներով թեւապար,
Նա ապրում էր տենչերի քիւր հազար.
Վեհաշքեղ տեսարանով հմայուած,
Անուշ ձայնով երգ էր երգում՝
Սիրած եարի վառ կարօտով տարփոգուած։

Հոսում են ջուրեր, թնդում են լեռներ,
Արձագանգում են կանաչ գարունի կենսաբոյր կանչեր...
Պաղգամբում չքեղափառ ճեմում էր
Կոյսը չքնաղ՝ հայեացք քաղցրաբոյր.
Արեւ արփաշող, հոգեյոյզ մի բոյր.
Երազներու ծփանքին մէջ լուսաշող,
Նա յուզմունքից օրօրւում էր սիրանազ,
Ինչպէս հովից թեթեւ պարող
Համեստափայլ ուռենի մի հեզանազ։
Նրա ձայնից սէր էր կաթում,
Գեղաժիժաղ ժպիտներով պսակուած,
Փարթամ կուրծքը ուռճանում՝
Սիրոյ երկունքի ցաւով զգացուած։

Մահասարսուռ սեւ խուսարի խոսքերէն՝
Ուր ապրում են
Լուրջները գետնամած,
Ուր պարում են
Հրէշները կատաղած
Խենէշ պարեր մերկացած՝
Հոգմ է փչում, փոշի ցանում երկնքում.
Եւ երկիր համակ խաւար է պատում.
Եւ անագնասակ մի ձայն է լսում.
Կանչում է...
Դէլֆին չարախօս։

Զքնաղ կոյսը երազներու անբիծութեան
Արեգնափայլ ճաճանչներով լուսաշող,
Լուռ ճեմում էր պատշգամքում,
Իր հայեացքը հին-հին լերանց,
Դէպի երկինք խիզախօրէն խոյացած,
Վեհատեսիլ բարձունքներին սեւեռած։
Նրա կուրծքը բարձրանում էր, ուռճանում,
Ինչպէս ալիք փոթորկայոյզ ծովերի,
Վառ առնչներու կրակներով հրդեհուած։

Հնոտներէն լռութիւնը վրդովող,
Մոլեգնավառ ատելութեան ձայներ լսուեց անապող.—
Տխուր վայրենք ծերացած բուի,
Զարաշուք կանչը մեռնող կարապի։

Զար ոգիներու խօլանք ահարկու
Պաշարեց կոյսին՝ համակ դալկացած.
Եւ վհուկներ գիւահար,
Դժնատեսիլ, ճիներուտ,
Լուսանքներով մահահոտ, խենէշ պարը բռնեցին.
Զքնաղ կոյսի լոյս պարզութեան
Թմբիրներով գինովցած,
Զրպարտութեանց սեւ շղթաներ,
Նրա վիզը անցուցին։

Եւ գեղուհին սարսափահար, զուսնատած,
Իր թեւերը դէպի երկինք երկարած,
Ցուսավառ հայեացքը
Հէգ զուսանին սեւեռեց։
Զքնաղ կոյսի հայեացքներէն սիրաշող,
Հէգ զուսանի յուզուած հոգին թափ առաւ,
Գեղատեսիլ պատկերին մէջ արփիաշող,
Ուժ, զօրութիւն թեւ առաւ։
Ասպետական յուշեր պէս-պէս խռովայոյզ,
Հերոսական դրուագներով հոգեյոյզ,
Վառ տենչերով բազմազան,
Կայծակի պէս եկան ու անցան...
Դող մի եկաւ խօլական...
Հին քաջերու
Դիւցազնական հպարտութեամբ,
Լեռնակուտակ ալիքներու
Մրրկայոյզ կատաղութեամբ,
Շաչող սուրը նա պարզեց...
Զքնաղ կոյսը արտասուեց...
Երկունք էր...
Տեսիլքներով խօլական։

Գիւրուր, 1934

Ա II 79486

ԳՐԱՉ

Երազիս մէջ ես քեզ տեսայ
Գեղեցիկութեան հմայքներով ցոլալառ,
Վարդահեղեղ արշալոյսի
Ճառագայթներով բոցալառ.
Եւ ծաղկունքով խնկաբոյր
Հիացմունքով զարդարեցի
Փարթամ կուրծքդ կաթնաբոյր։

Բնգի —

Լուսնեակի վայլ, արեւի շող,
Յոյսերուս առաջ, հաւատքիս վարոս
Աստուածուհի արփաշող։

Լուսացնցուղ յոնքերովդ պատկուած,
Եթերքի պէս խոր դիւթական,
Անրջաթոր սեւ աչերուդ նայեցի,
Եւ հմայուած կախարդական
Զայնէդ երերուն,
Աչերէդ ժպտուն,
Բոցատաւիղ իմ քնարի
Սիրանուագ լարերին,
Գնդուչօրէն զարնելով,
Կանաչ-կարմիր
Մուրազներով տենդագին,
Երգեր սիրոյ կանչեցի։

Քեզի —

Արեգնափառ դափնի
Գոտկ դու կնանքի,
Մենության մէջ
Երգեցափառ գիշուհի։

Սիրաւէտ թռչնանքի
Նայուածքիդ մէջ՝ շողար,
Տենչեր տեսայ ես հազար,
Հոգիս դարձրի
Երազներուդ թանգարան,
Վառ արեւիդ
Գաղտամունքիդ սուրբ խորան,
Եւ շափիւղէ դուռին վրայ պարզեցի՝
Նշխարի պէս ինծի համար նուիրական՝
Լուսապայծառ քո պատկերը գիւթական,
Եւ իմ հոգու
Համանրեղէն հիւսքերէն,
Երգեր սիրոյ,
Քեզի համար ձօնեցի։

Քեզի —

Սիրոյ երկնքում
Հուր-արեւ անշէջ,
Կենսապարգեւ աստուածուհեան
Լոյս-արեւ անշէջ։

Սիրոյ ոսկեղէն երաշնիներով,
Քեզի համար հոգուս խորանում,
Մեհեան ոսկեայ կանգնեցի.
Եւ քուրմերու ակնածութեամբ
Վսեմ սիրոյդ ատրուշանի
Սուրբ կրակը վառեցի,
Եւ ուխտեցի՝ քաջութեամբ,
Սիրաս թերել քեզ նուէր.
Վառ յոյսերով ես քո սրտի,
Ոսկէ գուռը բացելով,
Քեզի համար ձօնուած երգեր,
Դիւցազնական վեհ յուզմունքով երգեցի։

Քեզի —

Սքանչան իշխիրուս
Ոսկեկուռ խորան.
Կենաց խնկաբոյր,
Անշէջ ատրուշան,
Հեքիաթական հուրիներու
Գեղեցկութեամբ պսակաւոր
Յաւերժահարս աննման։

Փարուր, 1934

ՈՒՐԱՋ

Գարնանային պարզ գիշեր էր.
Մի հոյակապ տեսարան.
Երկինքը համակ կրակներով դիւթական,
Լուսապայծառ զեղեցկութեամբ վեհական.
Դուսան մի մագլում, տխուր, մենաւոր,
Մատաղուած յարդ խոտում էր,
Հրավառուած տեսարանը հեռաւոր։

Մահազարհուր ձայն մի յանկարծ որոտաց,
Գիշերային վեհ լռութեան ալքերէն.
Երկնաբարձ լերանց գագաթները զոռ թնդաց,
Եւ զունագեղ բոցեր ելան՝ ծուխ-ծիրանի պերճ հագած,
Կրակ ժայթքող կատարներուն խորերէն։

Սրբազան լերանց լանջերին կանգնած,
Հին վանքերէն մենաւոր,
Արձագանգում էր ձայն մի ահաւոր —

Աշխարհն է ունայն,
Կեանքն է համակ,
Առանց նպատակ,
Զարլարանք միայն.
Մահն է բացարձակ,
Ոգին թեւարձակ,
Անակնկալ, անվախճան,
Տիեզերքի մէջ՝
Անհուն, անյատակ.
Իսկ կեանքը բնութեան,
Մի խաղն է ունայն,
Մթնաղ ժպտագէմ,
Առանց նպատակ։

Հոգին սիրակիզ գուսանը յուզուած,
Ջիւնափառ լերանց կոզերին բազմած,
Վանքերէն լսուող ձայնէն զգացուած,
Առաւ իր քնար, լարերին զարկեց,
Եւ հայնացքները կապոյտին ուղղած,
Վարգաբոյր կեանքի երգերը երգեց,
սիրով ասրիսղուած։

Հեռու աշխարհից—
Վեհ ու ամեհի լեռներու մէջէն,
Մենութեամբ տխուր մենաստաններէն,
Լուսաշող կեանքի արեւ մաղթող,
Հոգու փրկութեան ձայներ ազատող։
Ես սիրում եմ—
Ուղղափառների ձայներ թնդացին,
Եւ սրտաբնդոստ երգեր մոլեգին.
Ուռճացած կուրծքով զէնքերը պարզած,
Քաջ մարտիկներին, վրէժով վառուած.
Կենաց և մահու կռիւը վարող,
Հայաբոս հերոսին՝ սուրը մահաշող.
Եւ մոքսանշան դրօշներ պարզած,
Բռնութեան դէմը անվախ ծառացած,
Հայ գիւղացիներին՝ փառքով պսակուած։
Ես սիրում եմ—
Գարնան բամբեր ծիծեռին,
Նրա երգի հոգեզմայլ մեղեդին.
Եւ հատերի արթուն պահակ,
Գառներուն հետ պար բռնած,
Հաւատարիմ գամփռներին գայրացած.
Գիշերախօտ աքլորներին,
Թառլանի պէս կատարները վէս բռնած.
Նազանանեմ ազունիկին սիրաթոյր,
Վարդի երգիչ բլբուլներին սիրաթոյր։

Ես սիրում եմ —
Դէպի անհուն խիզախօրէն խոյացած,
Վիհատանիկ հսկայ լեռներ սիգապանծ,
Սպիտակ ձիւնից ծիրանի հագած,
Արշալոյսի ոսկեհեղեղ ճառագայթներով ողողուած,
Հոյակապ հայեացքներ անհունին ուղղած։

Հեռու աշխարհից —
Ողբագին ոռգի հոգեմաշ ձայներ,
Մեղաց թոզութիւնան սրտայոյզ կանչեր։
Ես սիրում եմ —
Երկինքը անհուն, համակ լուսավառ,
Կապոյտ ծովերու կուրծքը կաթնալանջ,
Սլիքներ չաչող՝ գայրոյթով վառուած.
Փրփուրներուն մէջ՝ լոյսով հրդեհուած,
Դիւթական պարը ոսկեհուր ձկանց.
Եւ արեգակի լոյսով ոսկեղօծ,
Պճնուած աշխարհը, խանդով աչեկոծ։
Ես սիրում եմ —
Ամպերը հսկայ, իրենց վիթխարի ծոցում պարուրած,
Հուր փայլատակող խարոյկներ վառուած,
Շողակաթ լուսնի վրան խոյացող՝
Աշխարհասասան ձայնով ահաւոր, խօլ մրրկաթափ։
Որոտ դղրդացին, անձրեւ առեղաթափ...
Գոյներով բողբոջ ծիւծան կամար,
Պատկ երկնքի՝ նշան կենարար։

Հեռու աշխարհից —
Աստուածպաշտութեան անվերջ յորդորներ,
Պատաւած կանանց անմիտ խրատներ։
Ես սիրում եմ —
Լերան գագաթին վարդի պէս բացուած,
Արեգ արշալոյս, ծիրանի հագած.
Զիւանափառ լերանց սէզերու շոյանք,
Եւ նրանց կանաչ կողերին քուսած,

Մառեր մնծաշուք, փարթամ առգաւարտ
թագի պէս դրած.
Եւ նրանց գալար կուրծքերէն բղխող,
Վարար ջուրերու հոգեզմայլ կարկաչ։
Ես սիրում եմ —
Անտառներ թաւուտ, մարդերը կանաչ,
Սարլանջերին զորդի պէս փռուած,
Գարուն շողացող ծաղկունք խնկաբոյր.
Նազանքով պարող անմեղ թիթեռին,
Եւ մեղուներին՝ համակ կենսաբոյր,
Ջուարթ պար բռնած՝ շուրջը փեթակին.
Կարճատեւ կեանքը երգելով անցնող,
Կեանքի փողահար արդար ճբպուռին։

Հեռու աշխարհից —
Կեանքը ողբացող մռայլ մտքերի լալկան աշուղներ։
Ես սիրում եմ —
Երկինքը կապոյտ, արեւը պայծառ,
Վեհորէն ճախրող արծիւ յաղթապանծ,
Հայեացքներ հպարտ աշխարհին ուղղած.
Կայծակի թափով զոհը հարուածող,
Բազէն արագաշաւ, զարկը մահաշող.
Գոյութեան կռուին լծուած քրտնաջան,
Աշխատանք սիրող խեղճ մրջիւններին՝
Շինարար ոգու տիպար ժրաջան։
Ես սիրում եմ—
Սարալանջերի գարեւանգներում հպարտ կեցուածքով
Բաշը վէս բռնած, ընկիւնը խրոխտ,
Աչքերը նախշուն, ձայնը անյողդողդ,
Բաշի մազերէն հիւսուած, ոսկեշող,
Փունջերը կախուած ճակտին լուսաշող,
Սիրով ուռճացած, կուրծքը փրփրբած,
Նժոյգ հրաբաշ, վարսերը արձակ։

Հեռու աշխարհից —
Կրոն-գաղափար երկնային կեանքի՝
Սրբազան գրոց չքեղ հնչիւններ։

Ես սիրում եմ —
Ոսկեփրփուր շառուաններ՝
Ալ ու ալուան ծաղիկներով եղերուած,
Եւ գայլայլող թռչուններ՝
Հազար գոյնի փետուրներով զարդարուած։
Վարդի թուփեր՝ գարուն բուրացող,
Եւ նրանց տակից կապոյտ մանուշակ՝ թագուն
ժպտացող։

Ես սիրում եմ —
Երկնաբարձ լերան կատարից ժպտող,
Միրանի հագած արեգ վեհաշող.
Արտերը ծփուն, թեթեւ ալեկոծ,
Հասկերը լեցուն, ծողունք ոսկեզօծ.
Հազար նազանքով ուռենու տակից,
Մեղմօրէն բղխող յստակ առուի,
Զուլալ ջուրերու հեզանազ կարկաչ.
Տառերը ծաղկած, պարտէզներ կանաչ։

Հեռու աշխարհից —
Կրօն-գաղափար երկնային կեանքի՝
Դրախտ-գժոխքի սուրբ առասպելներ։

Ես սիրում եմ —
Վարդի թուփին մոտ ջերմ համբույրներիս
անուշ կարոտով,
Երբեր սիրուէտ անվերջ գեղգեղող,
Վարդի սիրաքան մաղլում սոխակին։

Ես սիրում եմ —
Կուրծքը թաւշալանջ, փարթամ սիրակաթ,
Շուշանի վրայ գլուխ խոնարհած,
Գեղեցկութեան թագուհի, մարալ խանդակաթ,
Աչերը նախշուն, հայեացք սիրարփի իր եարին
յառած։

Եւ կեանք եմ սիրում՝
Աշխարհ կենդանի —
Թէկուզ նա լինի —
Արեւ ամպամած,
Լուսին խաւարած,
Կամ ահագնատոկ խաւարի մէջէն —
Սուլոցը օձի,
Զայներ վիշապի,
Մթին անտառի անթափանց խորքէն —
Զարաշուք կանչը,
Մեռնող կարապի,
Վայունը թռի,
Ոռնոցը գայլի,
Կամ մահասարսուռ մռնչիւն առիւծի։

Հեռու աշխարհից —
Դրախտ-զժոխքի սուրբ առասպելներ,
Սրբազան գրոց շքեղ հեքիաթներ։

Ես կեանք եմ սիրում՝
Աշխարհ կենդանի —
Թէկուզ նա լինի,
Սեւ ոգեւորութեան,
Թատր տանջարան։
Անգամ խակ լինի,
Գեհենն մշտական,
Ցաւէտ, յաւիտեան։

Հեռու աշխարհից —
Արփիաշող կեանքի մահուան խուլ զօրանջ՝
Դալար աշխարհի մռայլ մղձաւանջ։

Ես եար ունիմ —
Արեգնազան հուր շողացող,
Ցաւերժահարս աննման,
Սիրաբորբոք, լուսաշողշող,
Մուրազների թանգարան։

Ես եար ունիմ —
Գարուն վարդաբոյր, ծաղիկ խնկաւէտ.
Եթերքի մէջէն հուր ճառագայթող,
Մարուլի նման աչեր հրաշող։
Նրան եմ սիրում,
Նրան երազում.
Ամէն առաւօտ կարմիր արշալոյս ոգջունել ուզում,
Հազար շողերով արեւի ճառագ տեսնել եմ ուզում,
Վարդի սիրաքան ախտակի երգը լսել եմ ուզում.
Որ նրա սիրոյն երգեր ես ձօնեմ,
Որ նրա սիրոյ երգերը կանչեմ։

Հիւսս աչխարհից —
Զոյն տրամաթախիծ սաղմոսերգութեանց,
Երկնային կեանքի սին մոռածուններ։

Ես եար ունիմ —
Արեւի ճառագ, գէմքը արփիաշող
Կոյսը գեղատիպ, չքնաղ գիցական.
Աչունք ասմազուն, ժպիտ գիւթական.
Ծաղկած մի գարուն, համակ կենսաշող։

Ես եար ունիմ —
Շքեղ բուրաստան կուրծքը կաթնալանջ,
Շուշան աննման, հասակը կանաչ.
Թառլանի նման սէգ եար երազող,
Յոյսերու առաջ՝ հուր լուսաշողշող։

Նրան եմ սիրում,
Նրան եմ տենչում.
Նրա զօրութեամբ մի սուրբ յուզմունքով,
Ողջ էութեամբս համակուել ուզում.
Նրա սիրատենչ սրտի մէջ գրուած,
Սիրոյ խորհուրդը կարդալ եմ ուզում։

Հեռու աշխարհից —
Ձեր տրտմաթախիծ անվերջ երգերով,
Ճակատիս վրայ կնճիռներ դիզող,
Ողբասացութեան ապշոտ-շարական։
Հեռու յաւիտեան —
Մահուան երգիչներ,
Սեւազգեստ քուրմեր։

Ես եար ունիմ —
Արեւազօծ հորիզոններ երազող,
Յոյզերով վսեմ պարիկ լուսաշող,
Ցուզումներով անբարբառ,
Ցաւերժահարս՝ դիցափառ։

Նրան եմ սիրում,
Նրան երազում.
Վսեմ յուզմունքով համակուած հոգու,
Եթերանման յար թրթռացող,
Ձայները անուշ լսել եմ ուզում.
Նրա սիրարփի մտիտ դիւթական,
Գեղաճեմ քայլեր, պատկեր դիցական,
տեսնել երազում։

Հեռու աշխարհից —
Վեհ ու ամեհի լեռներու մէջէն,
Տխուր ահուռոր մենաստաններէն,
Ողբաստղութեան ձայներ տխրագին.
Հեռու յուխտեան —
Մահուան երգիչներ,
Սեւազգեստ քուրմեր.
Ես ունիմ մուրազ —
Համբուրել եարիս աչեր սիրաթոյր,
Այտեր վարդաթոյր.
Գլուխ խոնարհել կաթի պէս ճերմակ,
Նրա կենսաբոյր կուրծքի լանջերին,
Ոսկեթել վարսեր ճակատիս փռուած՝
Որպէս լուսաշող պսակ տենչերիս.
Եւ բուրումնաւէտ նրա գրկին մէջ՝

Ուր վարդ է բուսած,
Կարօտ սոխակին,
Թիթեռն է պարում,
Ծանգով մոլեգին,
Եւ սէրն է բուրում,
Երգեր կանչելով՝
Հոգուս հիւսքերէն
Վսեմ յուզմունքով,
Երգեր միշտ ձօնել՝
Երգեր կանչելով։

Միայն ու միայն,
Այս է իմ մուրազ.
Աշխարհ չէ ունայն,
Կանքը չէ երազ։

Գիւրուբ, 1934





A II 79486

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐ

Բաստիլի Առումը (Սպառա
Ժիրոնդիս Ընդէմ
Լիբերալներ և Սոցիալիստներ
Մեսիանիզմ (Մուտքի տակ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ

Անխուսափելին
Ինչ-Ինչպես-Ինչպէս
Հայաստանեայց Եկեղեցին Ազգային Ճակատի Վրայ
Գրիգոր Եպիսկոպոս Եկեղեցին Երէց Գլանեանը Վրայ
Ցրուն-Մասնեերը
Ցարական Տրամաբանութիւն
Ցրանասական Սիմպիկալիզմը
Փեռնանդոս Նազար Աղան
Բարխուդար
Գուան եւ Մէկ
Անհատական Սպառումը
Եւրոպական Կուլտուրայի Ակնը
Ցեղասիրական Սոցիալիզմ
Մասնիալիզմ եւ Իդէալիզմ
Միապետութիւն եւ Հանրապետութիւն
Դէմոկրատիա եւ Դիկտատուրա
Ազգ եւ Ազգային Հարց
Կեանք եւ Մահ
Աչքերի Ստեղծագործութիւնը
Իշխան Նազարով
Մարկոս Գոգորիս
Նիւթ եւ Ոգի
Հաւասարութեան Տրամաբանութիւնը
Մարդում Վահէ
Ցիներական Հայաստան
Գրականութիւն եւ Արուեստ
Ռուսական Մեծ Գրականութիւնը
Համայնարարային Գաղափարը

Sunik, Hôtel Mersin, Beyrouth